№ 218 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16 (28) 1878 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16 (28) № 218

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1879 թվին

ԿՐ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետեւեալ օրերից։

Լրագրի դիրքը և պրոգրամման նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվանը 6 ռուբլ։ Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցէով՝ ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքեր։—Ներքին տեսութիւն։ Նինա Անդրիեվսկու սպանման գործը։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Նամակ Թիւրքիայից։—Խառն լուրեր։—Յայտարարութիւններ։—Բանասիրական, «Փորձ» հանդէս։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԸ

Եւրոպական լրագիրները վերջին ժամանակները յամառութեամբ հաղորդում էին այն լուրը, որ Թիւրքաց կառավարութիւնը մտադիր է 20.000,000 Թիւրքաց լիրայի փոխառութիւն անել և որ անգլիական կաբինետը խօսք է տուել Թիւրքիային ապահովել այդ փոխառութիւնը, եթէ Ռ. Դուռը կը համաձայնի մի քանի զիջումներ անել։ Անգլիայի պահանջած զիջումների մասին զանազան լուրեր էին տարածված, գլխաւորապէս նրա պահանջը կայանում էր նրանում, որ Թիւրքիան վերջնականապէս յանձնէ Կիպրոս կղզին և թոյլ տայ, որ անգլիական պատերազմական նաւերը մնան Ալեքսանդրետտա նաւահանգիստում։ Այդ պահանջները եթէ կատարվեն, կարող են եւրոպական պետութիւնների մէջ անհամաձայնութիւն ծագեցնել։

Մի քանի ժամանակ անգլիական կառավարութիւնը հերքում էր այդ լուրերի ճշմարտութիւնը, նա հաւատացնում էր, որ մինչև անգամ Անգլիայի և Թիւրքիայի մէջ չը կան բանակցութիւններ Թիւրքաց նոր փոխառութիւնը ապահովելու համար, բայց այն միջոցներում, երբ պէտք է փակվեին անգլիական համայնքների ժողովների նիստերը կառավարութեան անդամներից մէկը յայտնեց, որ անգլիական դեսպան Լայարդից լուր է ստացվել, որ Թիւրքաց կառավարութիւնը դիմել է նրա միջնորդութեանը նոր փոխառութիւն ապահովելու համար։ Մի և նոյն ժամանակ կառավարութիւնը խոստացաւ ժողովին, որ նա ոչ մի վճռողական քայլ չի անի առանց ժողովի համաձայնութեան։

Պարզ երևում է, որ Անգլիան մտադիր է նոր տիրապետութիւններ գործել Փոքր-Ասիայում։

Այդպիսի քայլը շատ անախորժ կը լինի մի քանի եւրոպական պետութիւնների, մանաւանդ Ֆրանսիայի համար, որ այդ գործում ուղղակի շահեր ունի։ Առ ժամանակ Ֆրանսիական կառավարութիւնը զբաղված է իր ներքին գործերով, նրա ուշադրութիւնը կենտրոնացրած է յունվարի 5-ին լինելու ընտրութիւնների վրա։ Այժմեանից Ֆրանսիական լրագիրները թշնամաբար վերաբերվում են Անգլիայի քաղաքականութեանը արևելքում։ Նորա պարզ ցոյց են տալիս, որ անբաւական են արտաքին գործերի մինիստր Վադդինգտոնի բռնած ընթացքից։

Իտալական ազատամիտ մինիստրութիւնը հրաժարական տուեց։ Մինիստրութեան առաջարկութեան դէմ ձայն տուին իտալական պարլամենտի բազմաթիւ անդամները, երբ քննվում էր արտաքին գործերի մինիստրի քաղաքական ազատամիտ նախագիծը։ Մինիստրութեան դէմ խօսեցին պահպանողական կու-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ՓՈՐՁ» ՀԱՆԴԷՍԸ

(Մի քանի ընդհանուր նկատողութիւններ)

I

Մի երեք տարի սրանից առաջ մենք մի առանձին դրութեան մէջ էինք։

Մենք ասելով գլխաւորապէս հասկանում եմ այն երիտասարդներին, որոնք սկսեցին լրագրութեան հետևել «Հայկական Աշխարհի» վերջին տարիները և մեր լրագրութեան նոր շրջանը մտնելուց։ Թէ նոր լրագրութիւնը մեզ վրա սաստիկ ազդեց, այդ արդէն ամենին յայտնի է. ինչպէս և լիներ նախկին մեր յարաբերութիւնը դէպի լրագրութիւնը այժմ պէտք է փոխվէր բաւականին կամ լայնանար այս ու այն կողմից։ Մինչև այդ ժամանակը իրաւի մենք հետաքրքրվում էինք լրագրութեամբ, բայց նրան չէինք համարում մեզ համար պահանջ. առանձին մի խոր ու էական կապ չունէինք այս կամ այն գրողի հետ։ Մենք ունէինք և շատ կասկածներ, և շատ անորոշ ձգտումներ, և հաղարաւոր տարակուսանքներ։ Նոր լրագրութիւնը հէնց նրանով էլ մեր համակրութիւնը գրաւեց, որ սկսեց խօսել մեզ հետ հասկանալի բառերով, սկսեց հաշուի ենթարկել մեր համոզմունքների և հասկացողութիւնների անկերպարան կոյտը։ Մտածողութիւն, կրիտիկա մտաւ մեր մէջ և ընթացող կեանքի վրա նոր կենսական գաղափար սկսեց կերպարանվել մեր ուղեղի մէջ։ Մեր պահանջները, որոնց ներկայութիւնը մինչև անգամ անզգալի էր մեզ համար, ստացան մասամբ բաւականութիւն մի և նոյն ժամանակ աւելի ու աւելի պարզվելով մեր մտքի մէջ և ծնելով նոր պահանջների մի մեծ շարք։ Դա առաջին քայլն էր։

Ստացած զարկը (արդէն փոքր ի շատէ ծարաւը զգացած հասարակութեան մէջ) չէր կարողանում բաւականանալ մեր լրագրութեամբ, հիմնվում էին գրականական ժողովներ, հասարակական գրադարաններ, կեանք էին ստանում ընկերակցական նամակագրութիւնները։ Բայց արտաքին ձախորդութիւնները մի տեղ վերջ էին դնում ժողովներին, միւս տեղ գրադարանների հարստանալուն կամ հիմնվելուն. լրագրութիւնը չէր համապատասխանում պահանջներին։ Դեռ չը մարսած առաջվանը մենք պահանջում էինք նորը. համոզմունքների տարբերութեան իսկական գինը որոշել մեզ համար բաւականին դժուար էր լինում և մենք սկսում էինք մեր հաւատը կորցնել դէպի մեր բոլոր ուսուցիչները։

Այդպիսի դրութեան մէջ էինք մի երեք չորս տարի սրանից առաջ։ Մենք սպասում էինք մի նոր առաջնորդի, որ կարողանար անաչառ աչքով հետազօտելու մեր տարակուսանքները, որ մեր զանազանակերպ ցանկութիւններին խելացիութիւն տար և մեր նոր ձգտումներին որոշ ձևակերպութիւն։ Այդպիսի զանգատներով և բաղձանքներով լիքն էին լինում մեր ընկերակցական նամակագրութիւնները միմեանց։ Եւ եթէ երևան գար այդպիսի մէկը մենք բոլոր սիրով կը կպչէինք նրան. մեր ոյժերը կը նուիրէինք նրա քարոզած գործունէութեան և ընդհանուր դրօշակի տակ կը մտնէինք։

Ցանկարծ լսում ենք կամենում է դուրս գալ «Փորձ» անունով մի ամսագիր։ կարծում ենք ահա սա է մեր փրկիչը. ահա սա է այն մեծ առաջնորդը, որ պէտք է մեզ համար գործունէութեան ասպարէզ բանայ և մեր ցանկութիւնների արտայայտողը լինի։— Դուրս է գալիս «Փորձը»։

II

Ամեն նոր հասարակական կրթողական ոյժ աշխարհ երևալով իր հետ բերում է և մի նոր բան. աշխատում է մի որ և է պակասութիւն լրացնել, հասարակական երևոյթների հասկացողութիւնը մի նոր բովքի մէջ ձգել։ «Փորձը» իր երևալու օրից պէտք է որոշէր իր տեղը միւս պարբերական հրատարակութիւնների մէջ. պէտք է ցոյց տար իր երևան գալու էական պատճառը։ «Փորձը» ոչ միայն չը կարողացաւ իր երկու տարի գոյութեամբ բացայայտ անել իր ինչութիւնը, այլ և չը կարողացաւ լոկ խօսքերով անդամ նրան արտայայտել որոշակի։

III

«Փորձը» իր հետ չը բերաւ ոչ մի զաղափար, ոչ մի պրինցիպ (սկզբունք)։ Նա չը յայտնեց մեզ իր համոզմունքները. նա միայն մի քանի բաներում կարծես թէ փորձեց իրաւաբանական տեսակէտի վրա կանգնել և այն շատ թոյլ ու անշնորհ կերպով։ Գուցէ ոչ մի զաղափար այնքան խստղական ընտրութիւն չունենայ, ինչպէս իրաւաբանականը։ Նրա հետ շատ զգոյշ պէտք է վարվել և նրանից պէտք է վախենալ իբրև երկայրի սրից։ Այն իրաւաբանութիւնը, որ «Փորձն» է գործ ածում, ի հարկէ կրթողական ոչ մի նշանակութիւն չէ կարող ունենալ և բաղդաւորապէս ընթերցողներից շատերի համար բոլորովին աննկատելի է անցել։ Եւ ինչ կարող է լինել այն իրաւաբանական գաղափարը, որ կրում է իր վրա արտաքին ճնշման և բարոյական անինքնուրոյնութեան ընաւորութիւն։— Այն ինչ որ անուանում են համոզմունքների կոդեկս, աշխարհահայեացք «Փորձի» մէջ մինչև այժմ չերևաց։ Հիմնական պրինցիպի և համոզմունքների բացակայութիւնը, մեր կարծիքով, գլխաւոր յատկանիշն է «Փորձի»։

IV

«Փորձը» կտրված է մեր կեանքից, բաժան է մեր ընթացող ցաւ ու հոգսերի աշխարհից. նա մեր ժամանակակից հասարակական մտաւոր շարժման հետ օրգանական կապ չունի։ «Փորձը» չէ կարող արտայայտող ասվել ոչ ոքի ցանկութիւնների, ոչ ոքի ձգտումների։ Մեր ներքին ընտանեկան ու տնտեսական կեանքը նրա հոգատարութեան առարկայ չէ դարձած, նրա դատողութիւնների նիւթ չէ եղած։ Ժողովրդի կեանքը, նրա բարքութիւնը, բարոյական և մտաւոր մոլութիւնները, տնտեսական զանազան երևոյթները, որոնցից կախված է ժողովրդի թէ այժմեան գոյութիւնը և թէ ապագայի առաջադիմութիւնը բոլորովին մոռացված են «Փորձի» տեսութենից։ Գուցէ տնտեսական խնդիրների մշակութեան նուիրված յօդուած պէտք է համարել այն, որ առաջին տարվայ երկրորդ համարում իբր առաջնորդողի դեր է կատարում։ Մեր կողմից երկայն խօսել և ցոյց տալ այդ երևելի յօդուածի բոլորովին հիւանդութիւնը առ այժմ աւելորդ է մեր ընդհանուր դատողութեան համար։ «Փորձի» այն մեծ պակասութիւններից—որոնք մեր մտաւոր տեսութեան առաջ շատ և շատ ակնյայտ են—

սակցութեան նշանաւոր անդամները և նախկին մինիստրները։ Հրաժարականը թագաւորից դեռ ևս ընդունված չէ։

Գերմանական կառավարութիւնը շարունակում է հալածել սոցիալիստներին։ Պրուսական կառավարութիւնը Բերլինը պաշարված յայտնեց։ Այդ առիթով պրուսական ազգային ժողովի անդամներից մէկը հարց առաջարկեց կառավարութեանը, որի անդամներից մէկը պատասխանեց, բայց չը կարողացաւ ոչ մի հաւանական շարժառիթ ցոյց տալ այդպիսի կարգադրութեան համար։ Ժողովի անդամներից մէկը ասաց, որ ընտանիքների տէր մարդկերանց աքսորելը բարբարոսութիւն է կառավարութեան կողմից, և որ սոցիալական վարդապետութեան զարգանալը իշխան Բիսմարկի վատ քաղաքականութեան հետևանք է։ Անդամներից մէկ ուրիշը աւելացրեց որ բարձր շրջաններում պախարակելի վարմունքը անպատիժ է մնում և որ այդպիսի անարդարութիւնը առիթ է տալիս ցածր դասին չը յարգել օրէնքները։

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԻՆԱ ԱՆԴՐԻԵՎՍԿՈՒ ՍՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԸ

Սպասողիչի Ճառի շարունակութիւնը։ Ինչպէս վկայում է լուացարար կին Զուեվա, հինգ օր անցքից առաջ Նինա ունէր ամանակներ, որ երևում է նրա լուանալու տուած լուացքից։ Դորանից կարելի է եզրակացնել որ ամսականների պէրիոդը վերջացած էր, ուրեմն ինչի չընդունել որ մաքրասէր աղջիկը այդ տեսակ դրութենից յետոյ ուզում էր լողանալ։ Իսկ որ նա գնաց լողանալու առանց ոչոքին ասելու, այդ շատ բնական է։ Նա ազատ վարմունքի տէր աղջիկ էր, բացի սորանից շատերը վկայում են որ Նինա միշտ հեռաքրքրվում էր տեղեկանալ Կուր գետի մէջ լողանալու մասին։ Թէև նա միշտ ասում էր թէ չէ կարող հասկանալ ինչպէս են լողանում Կուր գետի մէջ, բայց այդպէս են խօսում աղջկերանց մեծ մասը, երբ վճռած ունեն մի բան անելու։ Նա խօ չէր պատմի ամենքին որ դիտաւորութիւն ունի լողանալու։ Իր մօրը նա խոստովանել է իր դիտաւորութիւնը մի անգամ փորձ փորձել լողանալու գետի մէջ։ Օտարներին նա ի հարկէ ոչինչ չէր ասի իր այդ դիտաւորութեան մասին։ Նա քանի մի անգամ իջնում էր նեղ շաւիղով և հարց ու փորձ էր անում թէ որտեղ աւելի լաւ է լողանալ։ Այդ վկայում է և իշխանուհի Թումանովա։ Դատարանը, ասում է պաշտպանը, իրաւունք ունի, մերկացնել մարդուն և նրան հետազօտել, քննել նրա կեանքը։ Թէև Անդրիեվսկու ընտանիքը հարուստ է, բայց մենք տեսնում ենք թէ ինչ կոշտ և կարկատած շորեր և լուացք ունէր հագած օրիորդը։ Նա ինքը մաքրում էր իր սենեակը, ունէր շատ քիչ շորեր և լուացք, ուրեմն ինչի չընդունել որ լողանալու ժամանակ նա չունէր ոչ սպունգ և ոչ էլ սրբիչ։ Լողանալուց յետոյ նա կը հանէր շապիկը, կը հագնէր զգեստը, կը դնէր կօշիկները բոբիկ ոտների վրա և այդպէս կը վերադառնար տուն։ Բայց այնու ամենայնիւ նա շապիկով կարող էր լողանալ որովհետև այդ քաջ, անվախ աղջիկը, այդ արտիստուհի, ձի հեծնող օրիորդը, որ կարդում էր Հեկկելին և Դարվինին, մինչև ծայրայեղութեան ամօթխած էր, ինչպէս Կարլոս XII-որդ։ Նա համեստ, ամաչկոտ էր, նա երազում էր միշտ կոյս մնալ։ Նա բաղանիքումն էլ միշտ շապիկով էր լողանում, իր մօր առջև էլ երբէք շապիկը չէր հանում։ Ինքն մայրը վերջը համոզվեց որ այդ հնարաւոր բան է թէ աղջիկը լողանալու էր գնացել, գուլբաներով, շապիկով ջուր էր մտել և սրբիչ էլ չէր վերառել իր հետ։

Անցնելով Դաւիթ Զիստուայի վրա բարձած մեղադրանքներին, Սպասողիչ սկսում է խօսել այն երևոյթի վրա, որ իբր թէ օրիորդի կորչելու օրը տան մէջ եղած բոլոր շները փակած էին մի անյայտ ձեռքով, իսկ մի շունն էլ սպանված է եղել։ Այդ բոլորը վերաբերում են Զիստուային։ Ինքն Զիստուա խոստովանվել է որ քանի մի օր առաջ սպանել է տուել շներից մինին, որովհետև նա կատաղած էր երևում։ Մնացած ցուցումները տուած է Մգելաձէ, որի վկայութիւններին ինքը նահանգական դատարանը ոչինչ նշանակութիւն չէ տալիս, որովհետև Մգելաձէին բերդի մէջ տանջում էին, սպիտում էին խոստովանել չեղած թէ եղած փաստերը, հարբեցնում էին նրան։ Մնացած վկաների ցուցումները, պ. պ. Ցինամզդարովի և Մելիք-Բեգլարովի, պաշտպանը ընդունում է որպէս վառ երևակայութեան արդիւնք։ Եթէ ընդունում են որ Զիստուա, Գաբիսօնիա և ուրիշները իրանք չեն սպանել, այլ անյայտ մարդասպաններ Զիստուայի հրամանով, այն ժամանակ Զիստուա ոչ թէ միայն շներին պէտք է թագցներ, այլ և տան մէջ ծառայող մարդիկներին, որ նրանք չը տեսնեն սրսպանութեան անցքը։ Այդ դէպքում նա պէտք է մենակ նստէր մեղադրվածների նստարանի վրա։ Ինչի ուրեմն նոյն նստարանի վրա նրստած է և Գաբիսօնիան։ Իսկ եթէ տան մարդիկ են սպանել, նրանց աւելորդ էր սպանել կամ փակել շներին, որովհետև շները նրանց ճանաչում էին։ Նրանք կարող էին սպանել օրիորդին և դուրս բերել դիակը փողոցի վրա և այնտեղ յանձնել վարձված չորս մարդիկներին, որոնք գաւիթից դուրս մնալով, շներից ոչինչ վախենալու չէին ունենայ։ Եւ մի՞թէ մի 25 տարեկան օրիորդին սպանելու համար հարկաւոր է 8 մարդ։ Երկուսն էլ բաւական է։

Յետոյ պաշտպանը երկար խօսում է Զիստուայի alibi-ի մասին, այն է որ նա իբր թէ ուզում էր ապացուցանել, թէ դժբաղդ անցքի երեկոյին նա տանը չէր։ Բայց Զիստուա խոստովանվում է որ 9½ ժամից մինչև 10, այն կէս ժամվայ մէջ, երբ օրիորդը կորաւ, նա իր սենեակում քնած էր, ուրեմն տանն էր։ Եւ եթէ ընդունենք էլ որ Զիստուա իրան արդարացնելու համար սուտեր էր ասում թէ Կապանաձէին կարկատելու համար տուած վարտիկի մասին, թէ «Ներօպա» հիւրանոցում ընթրիք ուտելու մասին, թէ դեղատան մէջ դեղ առնելու և Զարախչեանի մօտ փողապատ առնելու մասին, դորանից կարելի է հեռևացնել որ Զիստուա ստախօս է և չէ կարելի հեռևացնել որ նա մարդասպան է։ Ո՞ր դատարանը կը պատժի ստախօսին մարդասպանութեան համար։ Այժմեան դատաստանական սիստեմը ինկվիզիցիա չէ, որ հիմնէր իր դատողութիւնը մեղադրվածի խոստովանութեան վրա, այժմ գործի դատարանում քննութեան ժամանակ չեն էլ կարդում մեղադրվածի կողմից յայտնած ցուցումները նախնական քննութեան ժամանակ։ Այժմեան դատաստանական սիստեմը հիմնվում է իրողութիւնների, փաստերի հետախուզութեան փաստերի միմեանց մէջ ունեցած կապերի վրա, և ոչ թէ մեղադրվածի ուղիղ թէ սխալ կերպով արած ցուցումների վրա։ Շատ անգամ մեղադրվածները իրանց պաշտպանելու համար,—իսկ իրանց անձը ամենը ներելի և աններելի միջոցներով պաշտպանելը մեղադրվածների իրաւունքն է,—այնպիսի ստեր են բարձում իրանց վրա, որ դորանով անգիտակցաբար իրանց աւելի վնասում են քան թէ օգնում։

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լսում ենք, որ ՄՈՍԿՎԱՑԻ հայ հասարակութիւնը մտադիր է մի ճաշկերոյթ կազմել ի պատիւ մեր քաջ հայրենակից գեներալ Լազարեվի, երբ որ սա Պետերբուրգից վերադառնայ Մոսկվա։ Գեղեցիկ դիտաւորութիւնը, որի իրագործութիւնը մենք սրտով ցանկանում ենք. մանաւանդ, որ այսպիսի չքեղ և փառաւոր հանդիսի մէջ կարելի է՝ ըստ սովորութեան բաց անել յօգուտ մի ազգային գործի, օրինակ «Արարատեան ընկերութեան», մի ստորագրութիւն, որ շատ յարմար և յաջող կը լինէր։

—

Ասում են, թէ մի երիտասարդ մի քանի ամիս շարունակ փող էր ժողովում ՄՈՍԿՎԱՑԻ հայ հասարակութեան մէջ յօգուտ «Արարատեան ընկերութեան» և թէ 100 ռուբլի նա արդէն ուղարկել է։ Երիտասարդի նպատակը շատ ազնիւ է և միանգամայն համակրելի։ Բայց մինչև այ-

---

տնտեսական քննադատութեան, հասարակական հոգեբանութեան և առհասարակ ներքին տեսութեան բացակայութիւնը ամենանշանաւոր մասն է կազմում։ Յօդուածի մեծութիւնը և մեր ամենամերձ նպատակը թոյլ չեն տալիս առայժմ երկայն խօսելու։

V

«Փորձը» չը կարողացաւ պահանջ կամ պահանջի արտայայտող դառնալ։ Այդ խօսքերով ահա ինչ ենք կամենում ասել։ Դիցուք ժողովրդական կեանքի ցաւ ու հոգսերը զգացած երիտասարդների մի խումբ կամենում է գործունէութիւն սկսել։ Նրանք փոքր ի շատէ ծանօթացել են կեանքի հետ. նրանց աչքի առաջ հիմնական պակասութիւնները և նրանց ընդհանուր բնաւորութիւնը արդէն պարզված են, գործունէութեան ուղղութիւնը որոշված է. իսկ իրագործման հարկաւորութիւնը կեանքի խնդիր է դարձած։ Այդպիսի մի խումբ սկսում է գործունէութիւն զանազան կերպով. բայց իր ցանկութիւնների արտայայտող դրել է մի լրագիր, մի ամսագիր, մի պարբերական թերթ, մի խօսքով ունի այն, ինչ որ անուանվում է օրգան։ Օրգանը ուրեմն այդ խումբի պահանջների ու ցանկութիւնների արտայայտողն է։—Փոխենք փոքր ինչ օրինակը. դիցուք (հեշտ հասկանալու համար) թէ ամբողջ ժողովուրդը պարապում է մի որ և է այնպիսի գործով, որ կամենում է թողնել նահապետական խանձարուրը և մտնել համաշխարհական վաճառականոցի կեանքի մէջ։ Այդ գործի յաջողութիւնը կախված է թէ ներքին և թէ արտաքին պայմանների լաւ ուսումնասիրելուց։ Շուտ թէ ուշ ինչպէս և իցէ կեանքը դուրս կը բերէ իր համար մի պարբերական թերթ, որ բացայայտ քննի յիշած պայմանները, տայ գիտական և հաստատ տեղեկութիւններ. արտայայտի այսպէս կամ այնպէս ժողովրդի պահանջները։ Եթէ այդ թերթը պատահաբար լուեց, դադարեց, կեանքը կը ստիպի նրա տեղը դուրս գալու մի ուրիշը, որովհետև պարբերական թերթը դարձել է կեանքի պահանջ, մի այնպիսի գործիք, որ նոյնպէս հարկաւոր է գործի յաջողութեան համար, ինչպէս և այն մեքենաներից մէկը, որի միջով անցնում է վաճառականների նիւթը։—Թէ առաջին և թէ երկրորդ դէպքում պարբերական խօսքը ունի իր դոյնը, իր բնաւորութիւնը։ Նա կարող կը լինէր և մի ուրիշ կերպարանք ունենալ. բայց դարձեալ որոշ և պարզ համոզմունքներ կրող... Աւելորդ է պատասխան սպասել այն հարցին թէ «Փորձը» որչափ է համապատասխանում այդ պայմաններին։ Նա կարողանար գոնէ բաշխողների և պառողների դեր կատարել։ Նա գոնէ աշխատէր այն լինելու, ինչ որ հարկաւորն է և անհրաժեշտ իրաքանչիւր հասարակական կրթողական և առաջնորդական այժ։—Մենք, ինչպէս ասացի, կարեորութիւն էինք զգում մի առանձին օրգանի, որ բացայայտէր, քննէր, ձևակերպէր մեր ցանկութիւնները, ուղիղ և խելացի հիմն տար մեր անորոշ հասարակական զգացմունքներին։ Գուցէ կասեն թէ այդպիսի գործ հեշտ չէ, հարկաւոր է պատրաստութիւն։ Մենք ևս համաձայն ենք. բայց աւելի ևս հարկաւոր է ցանկութիւն սովորելու անդադար. ով դադարել է ինքը սովորելուց, նա ուրիշներին էլ շատ շուտ կը դադարի սովորեցնելուց։

VI

«Փորձը» կեանքից դուրս է գտնվում։ Յօդուածները անկոչ և անսպասելի հիւրերի նման երևում են պատահական պատճառներից ղրդված։ Չը գիտես «Փորձն» է գրվում ընթերցող հասարակութեան համար, թէ հասարակութիւնն է հրաւիրված նրա ճաշակին համեմատ յօդուածներ կարդալու։ Մեք երբեմն մեծ յօժարութեամբ և բաւականութեամբ ենք կարդում այս ու այն յօդուածը. բայց այդ յօդուածը այնպիսի բնաւորութիւն ունի, որ նա կարող էր կարդացվել և մի երկու տարի առաջ, մի երկու տարի յետոյ. չունի ժամանակից նշանակութիւն կամ չէ կապված այն հողի ու հասարակութեան հետ, ուրտեղ նա գոյութիւն ունի։ Յօդուածների թէ բովանդակութիւնը և թէ կենսական նշանակութիւնը այնպէս են, որ «Փորձին» կարողութիւն կը տային մի և նոյն կերպ յառաջ գնալ և Մոսկվայում կամ Պետերբուրգում և Վիէննայում կամ Վենետկում և այլն։ Շրջապատող կեանքի ազդեցութիւնը այնքան աննկատելի է նրանում։

VII

Ժամանակակից նշանակութեան բացակայութիւնը արտայայտվել է կրիտիկայի բացակայութեան մէջ։ Կրիտիկան այստեղ հասկացվում է իր հասարակական-հոգեբանական և հասարակական-տնտեսական նշանակութեամբ։ Ոչ բարոյական իդէաները և ոչ հասարակական կազմուածքը դատողութեան արժանի առարկայ չեն եղել։ Կեանքի մէջ թէ կազմված և թէ կազմվող բարոյական անձնաւորութիւնները դեռ նիւթ չեն դարձել կրիտիկոսի գրչի համար։ Հասարակութեան դոյնը և շարժման ուղղութիւնը չէ որոշված։

VIII

Առհասարակ չէ նշանակված քննողութեան ասպարէզը, մեր քաղաքական և հասարակական կեանքի հասկացողութեան շրջանը։ Չեն դրված հետազօտութեան նոր միջոցներ, հայեացքների զարգացման նոր նիւթեր և տարրեր։ Չեն քննված կեանքի մէջ բացված և բացվող ճեղքերը, հասարակական մարմինը ուտող վէրքերը։

Ազգային կեանքի ինքնաճանաչութեան զարթեցնելու համար գործ են դրված հին եղանակներ։—Գրականական ձևերը տեղի են տուել կենդանի կեանքի շարժուն աղբիւրի հոսանքին և գրականական արդարութիւնը—կեանքի արդարութեան. իսկ դա մանաւանդ վնասակար է գրականութեան զարգացման առաջին քայլերում։

XI

Քաղաքական զարգացումը հանված է շրջապատող իրերի ու հանգամանքների շրջանից ու խեղդած անշարժ կաղապարներում։ Ձեր նկարած ցուցաստանը չէ ինձ զարգացնող ու կրթողը։ Տուէք ինձ գիտութիւն, տուէք ինձ հասկացողութիւն կեանքի և պատմութեան ընդհանուր խնդիրների վրա. մշակեցէք այդ խնդիրները և տուէք ինձ դեկ իմ թէ տնտեսական և թէ պատմական կեանքի համար։ Ուրիշի կեանքի ուսումնասիրութիւնը ոչ թէ աւելորդ չէ, այլ ևս կարևոր է, բայց ազգային կեանքի խոր ու մանրամասն ուսումնասիրութեան հետ։ Ուրիշի կեանքի քննադատութեան ժամանակ էլ նրա էական և ներքին կողմերը աւելի մեծ ուշադրութեան արժանի են, քան պատահական։ Վերջինները այնքան միայն նշանակութիւն ունեն, որչափ դիպուածքների ընդհանուր ազդեցութեան բնաւորութիւնն են պարզում։

X

Ցաւելացրէք այդ բոլորի վրա և ոլիմպիականութիւնը, որ արհամարհում է հրապարակի աղմուկը և ամբոխի անարգել շարժումը. որ աշխա-

սար մենք չիմացանք, արդեօք այդ բոլոր հաւաքած գումարն է, թէ մի մասը և ինչու արդեօք այդ երիտասարդը սովորութեան համաձայն չէ հրատարակում նուիրատուների ցուցակը հայ պարբերական թերթի մէկի մէջ ի լուր հասարակութեան։ Մեր լրագիրները միշտ ուրախութեամբ հրատարակել են և շարունակում են հրատարակել այս տեսակ ցուցակներ. ուրեմն ցանկալի է, որ Մոսկվայի նուիրատուների ցուցակը ևս շուտով լոյս տեսնէր։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պոլիս, 30 Նոյեմբերի

Զէյթունի յեղափոխութեան պաշտպանները Նիկողոս եպիսկոպոս, Յարութիւն վարժապետ Զաքրեան (չօլաք.) և Ղուկաս Փափազեան կիրակի գիշեր Կ. Պոլիս հասան ոստիկանութեան հսկողութեան ներքև և մահապատիժներու բանտն նետուեցան։ Պատրիարք Սրբազանը անմիջապէս ոստիկանութեան պաշտօնէին գնաց և խնդրեց որ Նիկողոս եպիսկոպոս Պատրիարքարանի յանձնի, և երբ քննութիւնն սկսի դարձեալ կառավարութեան յանձնէ զայն։ Ոստիկանութեան պաշտօնեայն խոստացաւ այդպէս ընել, բայց տակաւին արդիւնք մը չը տեսնուեցաւ, միայն Պատրիարքի բարեխօսութեամբ երեք ձերբակալեալներն մահապարտից բանտէն հանուեցան և առանձին սենեակ մը դրուեցան, և թոյլտուութիւն եղաւ նոցա այցելուներ ընդունել։ Մինչ-յել գիշերի յարձակման միջոցին բռնուած 200 հայերէն, կասեն թէ 30-ը միայն այժմ բանտն են ի Մարաշ, միւսներն թոյլ տուած են։

Կառավարութիւնը Նիկողոս եպիսկոպոսը մեծ խայտառակութեամբ Զէյթունէն մինչև ի Հալէպ բերել տուած է։ Եպիսկոպոսը միայն չապիկ և չապկընկեր մը հագած, մերկ ջորիի վրայ նստած, երկու ընկերաց ձեռքերն շղթայի զարնուած այնպէս եկած են։ Թէ Հալէպ և թէ Մարաշ խիստ հարցաքննութեան և տանջանաց ենթարկած են զանոնք։ Հարցաքննութեանց միջոցին բոլոր ձերբակալեալներն ասեր են թէ տուրքերու ծանրութիւնը, կառավարութեան բռնութիւններն, և մանաւանդ հայ ժողովուրդը ձրի և բռնութեամբ կառավարութեան աշխատցնելն ալ չափը անցուցին և ի զէն դիմած են որ փըրկուին.

Առանց սարսռելու չենք կարող լսել այն բարբարոսութիւններն զոր այժմ կառավարութիւնը կը գործէ Զէյթունի խեղճ ժողովուրդին վրայ. բաղմաթիւ կիներ, մանուկներ ծեծելով Մարաշ բերած են. այդ կիներու, մանուկներու այրերն, հայրերն փախստական լինելով կառավարութիւնը կը յուսայ որ նոցա ընտանիքներն խուշտանգելով փախստականներն անձնատուր լինին։ Դոցա մէջ կայ եղեր մի յղի կին, այնքան ծեծեր են խեղճը, որ զաւակը վիժեր և ինքն մեռեր է։

Կը յուսամ թէ կարենամ տեսնուել Կ. Պոլիս բանտարգելեալներուն հետ. նաև այն վարդապետին հետ որ այն կողմերէն վերադարձաւ, և բանական տեղեկութիւններ առնելու կարող լինիմ դարձեալ կը հաղորդեմ։

Նախորդ նամակաւս գրած էի թէ Պատրիարքարանէն հեռագիր եղած է Սսոյ Մկրտիչ Կաթողիկոսին որ անձամբ Զէյթուն երթայ և աշխատի յօգուտ ժողովուրդին։ Կաթողիկոսը կը պատասխանէ թէ երթալու հարկ մը չը տեսնէր։ Պատրիարքարանը դարձեալ կը հեռագրէ թէ Զէյթունի ժողովուրդը մխիթարութեան կարօտ է, պէտք է որ Կաթողիկոսը երթայ մխիթարէ զանոնք։

Գիտէք որ բարեկարգութիւններն առ այժմ միայն երկու գաւառներու մէջ պիտի գործադրվին, կը յուսայինք որ Հայաստանի գաւառներէն մին գէթ մասն ունենայ այս բարեկարգութիւններէն, և ահա Կ. Պոլսոյ անգլիական «Մէսենճը» թերթը կըսէ թէ բարեկարգութիւններն Պրուսայի գաւառին (Ուլիմպոսի ստորոտը, ուր կեր. Կաթ. լիկոսը երբեմն առաջնորդ էր) և Ասորեստանի մէջ պիտի գործադրուին։ Թէպէտ և Անգլիոյ դեսպանը կասէ Պատրիարքին որ հայք Համբերին, չը յուսահատին և Անգլիոյ խոստմանց վստահին (!). և լորտ Քարնարվոն պատրիարքի մի նամակ գրելով, կը խոստանայ իր աշխատութիւնն և աջակցութիւնն չնորհել հայոց խնդրոյն կարգադրութեան համար։

Շատ և շատ հաղորդեցի վշտաբեր տեղեկութիւններ, քիչ մ'ալ հայրենասէր սրտերու մխիթարութիւն պատճառող լուրեր փութամ տալ։

«Մշակի» ընթերցողք լաւ կը ճանաչեն Տէրսիմ լեռներն ուր քիւրդերու հետ խառն կը բնակին բաղմաթիւ հայեր. եթէ չեմ սխալիր «Մշակ» կը յորդորէր Էջմիածին հօն վարդապետներ խրկել և լուսաւորել ժողովուրդը. դժբաղդաբար այդ ձայնը չը լսուեցաւ։ Բայց այդ գաղափարը ամեն կողմ արձագանք գտաւ։ Պ. Կիրակոս Գազանճեան, երբեմն Կարնոյ եռեսփոխան, օսմանեան (հանդուցեալ) երեսփոխանական ժողովոյ, և այժմ քիւրդեր զսպելու համար պաշտօն ունեցող Շէֆիգ-պէյի ընկերացած, յանձնարարութիւն ընդունած էր Ս. Պատրիարքէն ընդարձակ տեղեկութիւններ հաղորդել Տէրսիմի մասին. Պ. Կ. Գազանճեան կարևոր նամակ մը կը գրէ Ս. Պատրիարքի և կառաջարկէ որ ընկերութիւն մը կազմուի Կ. Պոլիս Տէրսիմի լուսաւորութեան համար։ Նոյեմ. 12-ին «Արարատեան ընկերութեան» ընդհանուր ժողովը նիստ ունէր, և ահա Ս. Պատրիարքի կողմէ պ. Մինաս Չերազ, որ ժողովոյ անդամ է, իբր պատգամաւոր կը ներկայանայ և կը կարդայ պ. Գազանճեանի առ Ս. Պատրիարք գրած նամակն. սոյն նամակէն կը տեսնուի որ Տէրսիմի հայերէն շատերն ոտիտութենէ, շատերն երկիւղէ, ոմանք շահու համար հեղհեղեալ քիւրդ կը լինին. հայութիւնն այդ կողմերն բոլորովին ջնջուելու վտանգի մէջն է։ Ազնիւ էր նամակն. անհնար է նկարագրել այդ նամակի ժողովականաց վրայ ըրած տպաւորութիւնը. ամենքն յուզեալ էին, ամեն սիրտ կը բաբախէր։ Յետ ընթերցման նամակի պ. Չերազ կասէ թէ «Ս. Պատրիարքն մեծ փափագ ունի անմիջական դարման տանել Տէրսիմի հայոց վիճակին, սակայն նոր ընկերութիւն մը կազմելու մեծ դժուարութիւն կայ, և հարկ մը չը տեսնէր քանի որ «Արարատեան ընկերութիւնը» կայ նոր ընկերութեան. «Արարատեան ընկերութիւն» ամեն հայոց և Ս. Պատրիարքի վստահութիւնը գրաւած լինելով, Ս. Պատրիարքը կը խնդրէ ընկերութենէն որ Տէրսիմի լուսաւորութեան գործն ինքն յանձն առնու, ինքն պատրիարքն ամեն կերպով պիտի աջակցի ընկերութեան յառաջադիմութեան։

Ժողովը սիրով ընդունեց Սրբազան հօր առաջարկութիւնը և որոշեց շուտով վարժարան մը բանալ Տէրսիմի մէջ. և յանձնեց գործադիր ժողովոյ սոյն որոշումը ի գործ դնել, և պատրաստել մի յայտագիր Տէրսիմի լուսաւորութեան համար։ Գործադիր ժողովը անմիջապէս յարաբերութեան մէջ մտաւ պ. Կիրակոս Գազանճեանի հետ դպրոցի բացման տեղն որոշելու համար. նոյնպէս կարևոր գործերու համար կը բանակցի Ս. Պատրիարք հօր հետ։ Գործ. ժողովն այժմ Տէրսիմի համար ծրագիր պատրաստելու կը զբաղի։ Իւր խորհուրդներէն մին է ընթերցարաններ և դասագրքեր տպել ուր հայերէնի դիմաց հայերէն տառով քիւրդերէն ալ տպվի, որպէս իրենց լեզուն մոռացած հայերը շուտով նորէն ուսանին զայն։

Երբ դարերէ հետէ հաստատուած վանքեր անհոգ և թոյլ կը շարժին ազգային կենսական խնդրոյ մը մէջ, ահա դեռ հազիւ երեք տարի կայ որ կազմուած ընկերութիւն մը այսպիսի մեծ գործոյ մը կը ձեռնարկէ, վստահեմք որ ամեն կողմէ հայեր իրենց ձեռնտութիւնը և քաջալերութիւններն պիտի չնորհեն «Արարատեան ընկերութեան», որ նա իւր ձեռնարկած գործերն գլուխ հանէ։ Իսկ թէ մի քանի հայ հարուստներ տարեկան գումարներ յատկացնէին «Արարատեան ընկերութեան» Տէրսիմի մէջ շուտով վարժարանաց թիւը բազմացնելու համար։ Մի գիւղական նախակրթարանի համար տարեկան քանի մը հարիւր ռուբլի կը բաւէ։

Սակայն մինչ մի կողմէ ընկերութիւնը Տէրսիմի համար պիտի աշխատի միւս կողմէն Վասպուրականի համար իւր յայտագիրն գործադրելու ետևէ, ունի արդէն նախակրթարան մը, կը հաստատէ վանայ մէջ վարժապետանոց մը, որ առաջին անգամն է հայոց մէջ կը հաստատուի, և ահա կը հեռագրէ Վան Կիւանենց գիւղն «Արարատեան» նախակրթարան մը բանալ. Որպէս զի գիտնաք թէ Հայաստանի գիւղերն ինչպէս ուսման ծարաւի են, հոս նկարագրեմ Կիւանենցի «Արարատեան» վարժարանի բացումը։ Այս նկարագրութիւնը կը քաղեմ, «Արարատեան» տեսչի նամակէն։

«Հոկտեմ. 28-ին մեկնեցայ Կիւանենց և տեսնելով թէ դպրոցական յարկ լինելու յատկացած տանն վերաբերեալ նորոգութիւններն ըրած չեն գիւղացիք, անմիջապէս գործի սկսայ։ Տասնաւոր գիւղացիներ ուսման սիրով բռնկցունելով աշխատեցուցի ձրիապէս, որք մեծ եռանդով կը կատարէին իրենց ինկած աշխատութիւններն. բոլոր գիւղացիք ի թունդ ելան տեսնելով որ ստուգիւ դպրոցի բացումն կիրականանայ. նորատեսիլ ոգի մը և դեռ չը տեսնուած զգացում մը երևցաւ նոցա վրա, և ընդհանրական ուրախութիւն մը տիրեց վրանին։ Հոկտեմ. 28 օրուան կէս և հետևեալ երկու օրերն նորոգութեանց զոհելով, հոկտեմ. 31-ին Կիւանենց Արարատեան նախակրթարանի բացումն կատարեցի որ հետևեալ օրէն նոյեմ. 1-էն սկսեալ նախակրթարանն շարունակել սկսի աշակերտներ ընդունելով։ Դասատուն պ. Արշակ Տէր Յովհաննէսեան արդէն հոկտեմ. 28-ին, քան զիս առաջ խրկած էի գիւղն։ Նախակրթարանի բացման ժամուն խանուեցան բաւական մեծ բազմութեամբ գիւղացիք, այր, կին, ծեր և տղայ սոյն նոր տեսարանին ներկայ գտնուելու. կարի մեծ էր իրենց ուրախութիւնն, կարծես թէ իրանց աչքի տեսածին չէին հաւատար։ Արժ. Արիստակէս վարդապետ Տէր Սարգսեանց (եղբայր Երեմեայ սրբազանին, Առաջնորդ Վանայ) յատկապէս Կիւանենց եկաւ Վարագայ միաբանութեան եւ իւր սրբազան եղբօր կողմանէ ներկայ գըտնուելու «Արարատեան Ընկերութեան» այս նոր ձեռնարկութեան իրագործմանն և մասնակցելու հայրենիքի մէջ դպրոց բացուելու փառքին։ Վարագայ միաբանութեան երկրորդ ներկայացուցիչն էր այս փառաւոր գործողութեան մէջ պ. Սահակ Այվազեան։ Նախակրթարանի բացման յայտարարութիւնն գիւղին մէջ հնչուելուն պէս քիչ ժամու մէջ մի զինի մոց 51 աշակերտաց անունները նշանակել տուին ինձ, որք հետևեալ օրն պատրաստ էին նախակրթարան դիմել և որոց շատերն անձամբ վազեցին և գիրենք գրել տուին, ծնողաց ընկերակցութեամբ նշանակելոց մէջ օրիորդներ ալ կան։ Դեռ շատ գիւղացիներ ալ քաղաք կամ դաշտ գտնուելով չը կրցան տակաւին նշանակել տալ իրենց զաւակաց անունները. աւելի շատեր ալ դեռ կը սպասեն որ ձիւն տեղայ և դաշտային բոլոր գործեր դադարեն և ապա խրկեն իրենց տղայներ։ Վերջապէս յոյս կայ որ 80-էն աւելի աշակերտ ունենամք ի Կիւանենց...»

«Այսօր ստացայ նոյեմ. 4-ի առաջին նամակ Կիւանենցի վարժապետէն։ Աշակերտաց թիւ 70 ի հասած է, յորոց 15 օրիորդ են։ 20—21 մինչև իսկ 40 տարեկան տղամարդեր երթեկ կերպով դաս առնել կուգան և կը փափագին որ իրենց փափագ լցուի։ Ես ալ ինչպէս արդէն հրահանգ տուած էի, կրկնեցի դարձեալ որ սկսի դասատուն անմիջապէս դասագրքեր տալ նոցա ձեռք և դասախօսել։»

Այս ուրախալի տեղեկութիւններն հաղորդելով կը յուսամ որ Ռուսաստանի մեր եղբայրներն ինչպէս մինչև այժմ այսուհետև ևս իրենց նուէրներն պիտի չնորհին «Արարատեան Ընկերութեան» որ նա ևս առանց դադար առնելու տարաբաղդ հայրենեաց մէջ լոյս ծաւալէ։

Հայկակ

ԽԱՌՆ ԼՈՒԻՐԵՐ

Նոյեմբեր ամսին հրատարակվեցաւ Վիէննայի «Wiener Abendpost» գերմանական լրագրի մի քանի համարներում հայերի վերաբերութեամբ շատ հետաքրքիր յօդուածների մի շարք «Die Armenier» վերնագրով։ Հեղինակը է Ֆրանց ֆօն Լեօհէր (Franz v. Löher)։ Կաշխատենք ծանօթացնել մեր ընթերցողներին այդ յօդուածների հետ։

* * *

Ռուս «Тифл. Вѣстн.» լրագիրը յայտնում է որ նուէրներ յօգուտ «Արարատեան ընկերութեան» ընդունվում են «Մշակի» և «Մեղուի» խմբագրութիւնների մէջ և հրաւիրում է և ռուս հասարակութեանը մասնակցել այդ նուիրատուութիւններին, յիշեցնելով, որ անգլիական ինտրիգաները թիւրքաց Հայաստանում աչքի առաջն ունելով, ռուսաց հասարակութեանը հարկաւոր է այժմ գրաւել թիւրքիայի հայերի համակրութիւնը։

տում է պատերի բոլոր ծակուծուկերը փակել, արտաքին ոյժերի և լոյսի ներմուծութիւնը խանգարել և հաստատ ու անշարժ բարձրութեան վրա պատգամախօսութեան աշտարակ կանգնել։ Խորհրդաւոր խօսքեր ու բացականչութիւնները կամենում են ցոյց տալ այդ վեհութիւնը. չը վերջացրած և կիսախօսած նախադասութիւնները վարագոյր են հանդիսանում անտեսանելի բազմահանճարութեան։ Սխոլաստիկան և մթութիւնը միշտ առաջնորդ, կամ յետնորդ են լինում կեանքի անգիտութեան, կեանքից վախենալուն, կամ սովորել ու ուսումնասիրել չը ցանկանալուն։— Ով լաւ գիտէ կեանքը, նրա գոյութեան պայմանները, նրա զարգացման ուղղութիւնը, նա կը խօսի պարզ, բացայայտ և անկեղծ. իսկ կեանքը լաւ ճանաչելու համար պէտք է լինել փոքր ինչ համեստ, չրջապատել նոր ոյժերով իր գործունէութիւնը, թուլացնել ցանկացողների համար աշխատութեան ասպարէզ փակող պարիսպները, տալ կրիտիկական չափ իւրաքանչիւրի ձեռքը։ Եւ ոչ թէ գրականութեան մէջ արիստոկրատութիւն հաստատել...

XI

Ամսագիրները, ասում են, սերունդ են ստեղծում։ Սերունդ ստեղծել, իսկն ասած, անկարելի է։ Այդ ասելով հասկանում են ոչ թէ այն, որ կեանքի մէջ մտցնվում է մի բոլորովին նոր, անծանօթ, տարբեր գաղափար և իսկոյն մարմնանում սերունդի մէջ. այլ այն, որ ցրված և կոտոր ընկած տարրերից կազմվում է մի ամբողջ, կամ արվում է նպաստ այդ կազմութեան։ Փոքր ինչ փոփոխելով մեր խօսքը կարող ենք այսպէս ասել. ամսագիրը պարզում է երիտասարդութեան ընդհանուր ձգտման զանազան կողմերը, բացայայտում է գլխաւոր գծերը և ձևակերպում է նրանց որոշակի։—Արել է այդ «Փորձը» թէ ոչ. թողնում ենք ընթերցողի խղճմտանքին։—Կասեն «Փորձը» միայն երկու տարի է գոյութիւն ունի։ Գիտենք. բայց այն ժամանակը նշոյլները պէտք է տեսնէինք, պէտք է դրօշակի բարձրանալը նկատէինք։ Այն ժամանակ մի լրագրական յօդուածի, մի գրականական խոստովանութեան մէջ կը տեսնէինք մի որ և է քարոզած գաղափարի ոգևորիչ զօրութեան արտայայտութիւնը։ Եթէ «Փորձը» յիրաւի մի կենսական նշանակութիւն ունեցող զարգացողական կենտրոն լինէր, այժմ մենք կունենայինք մի մեծ և հաստատ խումբ այդ կենտրոնը չրջապատող։

XII

Գուցէ «Փորձը» իրան համար երբէք նպատակ չէ դրած եղել ամսագրի դեր կատարել և հասարակական կեանքի առաջնորդ լինել։ Գուցէ նրա նպատակն է եղել տալ ընթերցանութեան արժանի յօդուածներ։ Այն ժամանակ մենք կը նայենք ուրիշ կողմից և ցոյց կը տանք որ այդ դերն ևս շատ վատ է կատարված։—Ոչ. «Փորձը» ցանկացել է ամսագրի դեր կատարել. վաղուց է աշխատում է ամսէ ամիս նրան տպել և այժմ հասնում է այդ ցանկութեան իրագործվելուն։—«Փորձը» այնպէս, ինչպէս նա կար գուցէ նշանակութիւն ունենար, եթէ մենք հարուստ լինէինք առհասարակ զանազան ամսագրներով։ Ինչ և իցէ նրա մէջ տպվում էին ուշադրութեան արժանի յօդուածներ (դրանց թւում և այնպիսիք, որոնք համապատասխանում են մեր պահանջին մասամբ, օրինակ մատենախօսութեան մի մասը) և մենք կաշխատենք նրանց մասին մի ժամանակ խօսել։

XIII

Ընթերցողը լսած կը լինի, որ շուտով (նոր տարուց) «Փորձը» սկսվելու է ամսէ ամիս հրատարակվել։—Իբրև ամսագիր նրա նշանակութիւնը պէտք է մեծանայ։ Աւելի յաճախ երևալը, իրան ժողովրդին շուտ-շուտ յիշեցնելը—պէտք է նրա ազդեցութեան չրջանը լայնացնի։ Այդ իսկ հանգամանքը ստիպեց մեզ այս հարևանցի հայեացքը ձգել «Փորձի» մի քանի ընդհանուր պակասութիւնների վրա։ Ցոյց տուած պակասութիւնները ուրեմն և որոշում են արդէն այն պահանջները, որ մենք մտադիր ենք անել արդէն փոքր ի շատէ նշանակութիւն ստացած հրատարակութենից։ Մենք լաւ հասկանում ենք, որ մեր նկատողութիւններից մի քանիսը բաւականին կարճ և ամփոփ խօսքերով են արտայայտված. բայց աւելի ընդարձակ քննադատութիւնն էլ պէտք է արդէն յօդուածները սկսէր քըրքրել—իսկ դա շատ կը մեծացնէր մեր այս գրուածքը։—Եթէ մեր նկատողութիւնները աչքի առնուին, մեր կարծիքով «Փորձը աւելի լաւացած կը լինի և ամսագրի նպատակին աւելի մօտիկացած։—Ահա համառօտաբար վերևում ասածից բղխող մեր պահանջները. հասարակական կեանքի հետ սերտ կապ. ներքին և ժամանակակից տեսութիւն. հասարակական-հոգեբանական և անտեսական յօդուածներ ու կրիտիկա. նոր ոյժերի ներմուծութիւն. յօդուածներ հիմնված բազմակողմանի ու մանրամասն թղթակցութիւնների վրա (վերջիններս պատկանող իրան խմբագրութեան կամ մեր լրագիրներին) և նուիրված կեանքի զանազան ճիւղերին և այլն։

XIV

Յիշեցնենք և մի բան։ Իւրաքանչիւր փոքր ի շատէ մտածող և ինքնակրթող անձն առաջ է գնում միշտ հաչիւ և համար տալով իր արածներին. նա քննում է իր վարմունքը, իր անցեալ գործունէութիւնը. եթէ կան անցեալում լաւ կողմեր, փայլուն երևոյթներ նա աշխատում է նրանց պահպանել, նրանց զարգացնել. եթէ կան սխալ ու վնասակար հակումներ նա նրանց քննում է և աշխատում է ոչնչացնել նրանց ազդեցութիւնը և այլն։ Գուցէ այս օրինակը իր բոլոր մանրամասներով չէ համապատասխանում պատմական կեանքի զարգացման. բայց նմանութիւն ունի։ «Փորձը» մի օրից մի օր չը քննեց մեր մտիկ անցեալը, յօդուածներ չը տուեց մեր անցեալ շարժողութիւնը բացայայտելու համար. կրիտիկա չը նուիրեց մեր հանդուցեալ ամսագրների գործունէութեան (Հիւսիսափայլ, Կռունկ և այլն)։ Ինչ էին նրանք. ինչպէս էր նրանց ազդեցութիւնը. որչափ մեծ էր այն ժամանակվայ գործողների բարոյական ոյժը, նրանց մտաւոր պաշարը։—Եթէ կրիտիկան քնի, ինչպէս մինչև այժմ քնած է, գուցէ դեռ այժմ նշանակութիւն ունեցող գրուածքները դարձեալ մի քանի տարուց յետ կորցնեն նրան, կեանքի անդադար փոփոխութիւնից։—Իսկ ինչ վերաբերում է այն խնդիրներին, որոնք երէկ և այսօր էին հոգատարութեան առարկայ և որոնց մասին ազգային հանդէսը լուռ է մնում, դա նշան է հասարակական անտարբերութեան, կամ կեանքի մէջ գործող լինելու անընդունակութեան։

«Փորձի» առաջին և վերջին օրը համարեա մի և նոյն կերպարանքը ունեն նրա համարներում։ Այդ միշտ այդպէս է լինում. կաբինետում նստողի համար աննկատելի է անցնում ամառվայ անտանելի շոգը և ձմեռվայ սասիկ բուքը։

Մոսկվա. Քալանթար

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

ՔԱՐԱԾՈՒԽ „ՌՈՒՍԱՍՏԱՆ“ ԸՆԿՏԻ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ՉԷԼՕՐԱՆԻ ԱՐՈՒԱՐՁԱՆԻ ԿՈՒՐՍԿԵԱ ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԻՅՄԱՆ—ՀԻՆԻՆԳ

Ծախվում է ՇԷՆԻՆԳԻ ՊԱՎԻԼԻՕՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՅԻՆ ԱՄՈՂՋ ՎԱԳՕՆՆԵՐՈՎ ՆՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՓՈՒԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔԱՂԱՔԻ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՓՈՒԴԸ 28 ԿՕՊԷԿՈՎ:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է ի գիտութիւն ամենքի Թիֆլիսի քաղաքային Դումայի 1879-1882 թիւը ձայնաւորներ ընտրելու համար կանոններ, որ հաստատված են Դումայից 1872 թւի հոկտեմբերի 16-ին

§ 1. Ընտրութիւնների ժամանակամիջոցից մէկ շաբաթ առաջ իւրաքանչիւր կարգի ընտրողներին առանձնապէս իմաց են տրվում ընտրութիւնների տեղը, օրը և թիւը յայտարարութիւնների միջոցով, որոնք կը տպվեն բոլոր տեղական լրագիրներում, և նոյնպէս քաղաքի զանազան մասերում ռուսաց հայոց և վրաց լեզուներով յայտարարութիւններ կպցնելով և ուղարկելով այդ յայտարարութիւնները Սօսլիխի վարչութիւններըն:

§ 2. Նախ եկող ընտրողները ժողովի դահլիճի մուտքի առաջ նշանակվում են ցուցակի մէջ գալու կարգով իւրաքանչիւրի ազգանունի առաջ նշանակելով ձայների թիւը և նոյն սատանում են թէ դահլիճի մուտքի սոմսակը և թէ մէկ տպագրված բլանկ կանդիդատներ նշանակելու համար, եթէ նրանք կանխաւ պատրաստած չունեն կանդիդատների ցուցակը: Իւրաքանչիւր մուտքի տոմսակի վրա նշանակվում են ներկայացնողի ձայների թիւը:

§ 3. Ընտրողները մտնելով նիստի դահլիճը ժողովի նախագահին ներկայացնում են ձայնաւորներ առաջարկված կանդիդատների ցուցակը, որը նախագահը պցում է ներկայ եղող ընտրողների ներկայութեամբ ուրնայի մէջ. և ապա նախագահի ժողովը բացելուց կէս ժամ յետոյ, սկսվում է ցուցակների որոշումը և ընդհանուր կանդիդատական ցուցակ կազմելը: Ուրնայի մէջ ձգած ցուցակների որոշելը սկսելուց յետոյ, նոր ցուցակներ են ընդունվում:

§ 4. Ձայնաւորներ առաջարկված անձինք, որոնք չեն նշանակված ընտրողական ցուցակների մէջ հանվում են կանդիդատների թւից:

§ 5. Ժողովի դահլիճում բացի իւրաքանչիւր կարգին պատկանող ընտրողներից և մասուլի ներկայացուցիչներից, ոչ ոք չէ թոյլատրվում, բայց հասարակութիւնը կարող է թոյլ տրված լինել ընտրողներից առանձին, եթէ որ դահլիճի բովանդակութիւնը կը թոյլ տայ:

§ 6. Քուէարկութեան համար քուէները բաժանվում են ձայների թւով ժողովի նախագահից և ընտրողական ժողովի լիազօր անձերից:

§ 7. Ընտրողները հրաւիրվում են քուէարկութեան համար գալու կարգով. Այն ընտրողները որոնք գալիս են քուէարկութիւնը սկըսելուց յետոյ նոյնպէս մասնակցում են ընտրութիւնների մէջ: Այն ընտրողը որը քուէարկվում է ձայնաւոր ընտրվելու համար, իրաւունք չունի քուէ ձգել իր քուէարկվող արկղի մէջ:

§ 8. Քուէարկութիւնը վերջանալուց յետոյ սկսվում են ձայներ հաշվելը, նրանից յետոյ ընտրողները իրաւունք չունեն մասնակցել քուէարկութեանը:

§ 9. Իւրաքանչիւր արկղի մէջ գտնված քուէների հաշիւը վերջացնելուց յետոյ, ընտրողական թերթի վրա նշանակվում են իւրաքանչիւր կանդիդատի ազգանունի հանդէպ ընտրող և չընտրող քուէների վերջին թիւը: Արկղի քուէների հաշիւը վերջացնելուց յետոյ թերթը կարդացվում է ընտրողական ժողովին և ստորագրվում են նախագահը և ներկայ եղող ընտրողները:

ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ և ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ փնտռում է դասերի համար կամ վարձով բնակարան և ուտելիք: Հարցնել կլասիկական Գիմնազիայի գործավարին:

5—5

ԳՐԻԳՈՐ ՆԱՍԻԲԵԱՆԻ ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ

ստացվել են մեծ քանակութեամբ ՑՐԱԿԻ ԵՒ ՏՐԻԿՕԻ ՍԻՒՐՏԻՒԿՆԵՐԻ ՇՈՐԵՐ, որսորդական ԱՌՒԻՕՏԵԱՆ ԺՕԿԵՏՆԵՐ, ձմեռային ՊԱԼՏՕՆԵՐ և ՎԱՐՏԻԿՆԵՐ, երեխայոց հագուստներ, ՎԵՐԱՐԿՈՒ—ԽԱԼԱՏՆԵՐ զարդերով, նոյնպէս ընդունվում են ՊԱՏՈՒԷՐՆԵՐ զինուորական և քաղաքական հագուստների համար: Յոյս ունիմ, որ ինչպէս պատուիրողները նոյնպէս է գնողները ԲԱՒԱԿԱՆ ԿԸ ՄՆԱՆ:

17—75

Լոյս տեսաւ և վաճառվում է «Կենտրոնական» և պ. Զ. Գրիգորեանցի գրավաճառանոցներում «ՌԸՆԷ» գործ Ֆրանց Հօֆմանի, Թարգ. Վ իշապազուն գինն, է 40 կ.

6—6

«ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ հարկաւոր է մէկ ԼՐԱԳԻՐ ՏԱՐԱԾՈՂ: Պայմանների մասին կարելի է տեղեկանալ ԱՄԵՆ ՕՐ առաւօտեան ժամի 10-ից մինչև 2 ժամը կէսօրից յետոյ:

ВЪ РЕДАКЦИИ «МШАКЪ» НУЖЕНЪ РАЗНОЩИКЪ.

ՍՕՖԻԱ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԽՕՋԱՅԵԱՆՑ յայտնում է ազգականներին և ծանօթներին, որ շաբաթ դեկտեմբերի 16-ին $9^{1}/_{2}$ ժամին Մողնու սուրբ Գէորգ եկեղեցում իր հանգուցեալ ամուսին Վասիլ Օսէպիչ Խօջայեանցի քառասնօրեայ այցը կը կատարվի:

ԳԷՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍ

որ գտնվում էր Գօլօվինսկի պրօսպեկտի վրա Սարաջովի տանը, այժմ գտնվում է նոյն ԳՕԼՕՎԻՆՍԿԻ պրօսպէկտի վրա, ՇԻՕԵՎԻ տանը, Գերմանական կլուբի և Վէստլի Ֆոտօգրաֆիայի մօտ մի և նոյն սանդուղքով: Այցելողների համար բաց է ԱՄԵՆ ՕՐ առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 5 ժամը: Հաւաքածուին ՆՈՐ ՆԿԱՐՆԵՐ են աւելացրած:

12—25

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Վաճառվում են, ի միջի այլոց, հետեւեալ գրքերը՝

	р.	к.		р.	к.
1. Տիւզէնջեան՝ Տոմարագիտութիւն կազմ. 78 թ.	2	25	ծանապ. ծախ.	2	60
2. Տերենց՝ Թորոս Լեւոնի, պատ. վէպ	1	„	—	1	20
3. Խուդաբաշեան բառգիրք հայերէնից ռուսերէն երկու հատոր, կազմած (սակաւաթիւ)	7	„	—	7	60
4. Ֆրանց Հօֆման՝ Ռընէ, վէպ	—	40	—	„	50
5. Косовичъ Мет. Олендорфа для изученія французскаго языка 78 г.	3	„	—	3	40
6. Ахвердовъ Арменія въ V вѣкѣ	1	„	—	1	20
7. Т. Акоповъ современное Арм. общ. въ Оттоманской имперіи	„	40	—	„	50

8. Ստացված են բազմաթիւ հայերէն գրքեր, թէ ինքնուրոյն և թէ թարգմանական, Կ. Պոլսոյ և Զմիւռնիոյ տպագրութիւնք:

9. Շուտով կը սկսվի վաճառվել Եղիշէի Վարդանանց պատերազմի պատմութեան նոր տպագրութիւնը, ըստ Անձևացեացն օրինակի: Տպագրութեանը բարեհաճեց հսկել Նորին Սրբազնութիւն Գաբրիէլ Արքեպիսկոպոս Այվազեանը. տպագրված է ամենայն զգուշութեամբ և ընտիր թղթի վրա: Հասցէն՝

Въ Центральную книжную торговлю. Въ Тифлисѣ.

Թիֆլիսի Քաղաքային Դումայի վճռի հիման վրա, որ կայացաւ Նոյեմբերի 16-ին, ընտրողական ժողովները, եկող չորս տարվայ համար Դումայի ձայնաւորներ ընտրելու նպատակով, կը կայանան՝

I կարգի համար Դեկտեմբերի 12-ին Քաղաքային Դումայի դահլիճում, Ըղաբաբովի տանը, Սերգիեվսկի փողոցի վրա: Նիստը սկսվելու է առաւօտեան ուղիղ ժամի 10-ին:

II կարգի համար Դեկտեմբերի 15-ին Թիֆլիսի Սօբրանիայի դահլիճում, իշխան Մուխրանսկու տանը, Գոլովինսկի Պրօսպէկտի վրա: Նիստը բացվելու է առաւօտեան ուղիղ 10 ժամին:

III կարգի համար Դեկտեմբերի 18-ին նոյնպէս Սօբրանիայի դահլիճում: Նիստը բացվելու է առաւօտեան ուղիղ 10-ժամին:

Քաղաքային Ուպրավան յայտնելով սորա մասին յընդհանուր գիտութիւն հրաւիրում է I կարգի պ. պ. ընտրողներին 12-ին Դեկտեմբերի, II կարգի 15-ին, իսկ III կարգի 18-ին նոյն ամսի շնորհ բերել վերոյիշեալ տեղերը որոշված ժամին ժողովների նստերին:

Ընտրողների այբուբենական ցուցակը ստանալ ցանկացողները կարող են դիմել Քաղաքային Ուպրավային ամեն օր բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10 ժամից մինչև 2 կէսօրից յետոյ:

ОБЪ ИЗДАНИИ
ВЪ 1879 ГОДУ ВЪ БАКУ
ГАЗЕТЫ
БАКИНСКІЯ ИЗВѢСТІЯ
ГОДЪ ЧЕТВЕРТЫЙ

Цѣна газеты на годъ въ Баку съ доставкой 5 р., на полгода—3 р.. на три мѣсяця 1р. 75 к., въ мѣсяцъ 75 к. Съ пересылкой во всѣ города имперіи на годъ 6 р. на полгода .р. 50 к., на три мѣсяца 2 р. на мѣсяцъ 90 к.

Подписка приинмается въ Баку въ домѣ Дадашева, на Милютинской улицѣ близь гостинницы „Кавказъ“ и въ Бакинскомъ Обществѣ Взаимнаго Кредита.

Иногородные адресуютъ свои требованія исключительно: *Въ Баку, въ редакцію Бакинскихъ Извѣстій*

„ТИФЛИССКІЯ ОБЪЯВЛЕНІЯ“

Въ 1879-мъ году будутъ издаваться по возможности въ улучшенномъ видѣ. Будеть обращено особенное вниманіе на типографскую исправность и своевременную доставку. Форматъ по мѣрѣ накопленія матеріаловъ будетъ увеличиваться.

ПОДПИСНАЯ ЦѢНА.

	на годъ	на $^{1}/_{2}$ года	на 3 мѣс.	на мѣс-
Въ Тифл. съ дост.	2	1р.—50к.	1р.	50 коп.
Иногороднымъ	4	2р. 50 к.	1р.—50к.	75 коп-

Подписка исключительно принимается въ конторѣ редакцій что въ Галереѣ Арцруни, на Дворцовой улицѣ.

ԹԱՂՄԱՆ ԵՐԱԺՏՈՒԹԻՒՆ ունենալ ցանկացողները թող բարեհաճեն դիմել Չեխսկո-սլավեանսկի օրկէստրի դիրեկտոր պ. Մատուշեկին: Հասցէն Մուխրանսկայա փողոց, տուն № 27: ԳԻՆԸ ԹԱՆԳ ՉԷ:

2—2

ՂԱՐՍԻ ծխական ուսումնարանի համար հարկաւոր են երկու ուսուցիչներ: Պայմանների մասին խօսել ցանկացողները կարող են հասցէն իմանալ «Մշակի» խմբագրատանը:

3—4

Дозволено Цензурою 15 Декабря 1878 г. Тифлисъ Типографія Мартиросіанца Խմբագիր—Հրատարակող ԻԳՕԱՐԾ